

ՎԱՐՊԵՏԻՆ ՏԵՍՆԵԼՈՒ ՈՒ ԼՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Թվում է՝ իր աշխատասենյակից հենց նոր է դուրս եկել Վարպետը. դուրս է եկել շատ կարճ ժամանակով, պարզապես շրջելու ծառայարդ բակում, հանգստանալու իր տնկած խնձորենու ու ծիրանենու սովերում, նստելու հայ ճարտարապետների նվիրած, իրեն այնքան սիրելի տուֆակերտ բազմոցի վրա...

Թվում է՝ ուր-որ է նա կմտնի ներս, կմտնենա գրասեղանին, կվերցնի ակնոցը ու, մի կողմ լինելով ընթերցվող գիրքը, կսկսի գրել իր նոր երգը...

Կգրի իր նոր երգը հռչակավոր «Արու-Լալա-Մահարիի», «Ալազյայի մանիների», «Մաճկալի» հեղինակը, ու այդ նորն էլ կլինի նույնքան սիրելի, նույնքան ժողովրդական, այդ երգն էլ կերգի գյուղացին հայոց բարձրաբերձ սարերում, ու երբ հարցնեն՝ ո՞ւմ հորինածն են երգում, նա է՛լի կասի՝ ժողովրդինը:

Հրջում են ժողովրդական բանաստեղծի՝ Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանի ինը սրահներում ու վերապրում Վարպետի կյանքը:

Ահա սահմանամերձ Ղապարապատ գյուղը, Հիրակի գողտրիկ, հաճելի անկյուններից մեկը, ուր ծնվել է բանաստեղծը. «Սիրելագույն Հիրակն ինձ համար տիեզերքի կենտրոն է եղել, — ասել է բանաստեղծը, — որովհետև այստեղ է, որ սկսել է բարբախել իմ սիրտը: Այստեղ եմ պգացել աշխարհը: Այս կենտրոնում է սկիզբ առել իմ աշխարհաճանաչումը: Այստեղ եմ լսել և սովորել մեր հոյակապ մայրենի լեզուն»:

Եվ ահա այդ «տիեզերքի կենտրոն» Հիրակից ծնվեց, մեծացավ, նրա սահմաններից շատ հեռու գնաց Ավետիք Իսահակյանի սքանչելի պոեզիան: Նրա «Արու-Լալան» կարդացին տարբեր լեզուներով, սիրո երգերը հուպեցին սիրահար սրտերին, նրա դարդի հետ լացեցին «սարի ամբուլն» ու «ալվան-ալվան ծաղիկները», նրա հետ «սարերը կորած երկնի մովի մեջ» հայրենիքին «հազար ու մի կյանք» մատաղ արեցին շատ-շատերը:

Ամեն մի սրահը բանաստեղծի հետաքրքիր կյանքի մի շրջանի համառոտ, փաստացի պատմությունն է: Իրանցում ցուցադրված են բազմաթիվ լուսանկարներ, նամակներ, գրքեր, կտավներ, ինքնագրեր, արտասահմանյան ուղևորությունների լուսավորվող քարտեզներ, անձնական օգտագործման իրեր:

Ահա Լալայիցում ուսանած ժամանակաշրջանի (1893—1896 թթ.) բանաստեղծությունների ինքնագրերի լուսանկարային պատճենները, ահա և նրա ստեղծագործությունների անդրանիկ չ'ըղովածուն՝ «Երգեր ու վերքեր» խորագրով: Նաեփան Հահումյանի ուղարկած՝ ռուս նարողնիկ-բանաստեղծ Պ. Յակուբովիչի բանաստեղծությունների ժողովածուն հետաքրքիր ընթացակարգով. «Տիեզերքի պերճ հյուսվածքին», 1899 թ. Ռիգա, Ստ. Հահումյանից»:

Այցելուների ուշադրությունն են գրավում «Արու-Լալա-Մահարի» պոեմի հրատարակություններն օտար լեզուներով, Վահան Տերյանի, Ալեքսանդր Մյանսիկյանի և Ավետիք Իսահակյանի ծանոթությանը վերաբերող նյութերը, «Ուստա Կարո» անավարտ վեպի ինքնագիր հատվածները, վեպի մասին հեղինակի անտառացիան: Ցուցադրված են Իսահակյանի ծրագրած «Լենին» պոեմի ձեռագիր սխեման, Հայրենական պատերազմի տարիներին գրած նրա մարտաշունչ բանաստեղծությունների ինքնագրերը:

Վարպետի տան դուռը չի ծածկվել երբեք. նրա մտ է եկել բանաստեղծ ընկերը՝ նոր երգը կարդալու, արվեստագետը՝ երգիչ-բանաստեղծի իմաստուն խորհուրդը լսելու, երիտասարդ բանաստեղծը՝ սրտի թրթռումով իր թրթռվածքին ծանոթացնելու: Եկել են գրականագետներ, գիտնականներ, ընթերցողներ՝ սիրելի Ավոյի սրամիտ խոսքը լսելու: Նրան միշտ շրջապատել են պիոներները... Այս բոլորի մասին պատմում են սրահներում ցուցադրված լուսանկարները:

Ավետիք Իսահակյանի բովանդակալից կյանքի առանձին դրվագները, նրա պատկերավոր բանաստեղծությունները թեմա են դարձել մեր շատ գեղանկարիչների համար:

Բանաստեղծի նկատմամբ տածած մեծ հարգանքի ու սիրո լավագույն առիվատշյան այն հավազվուտ, թանկարժեք նվերներն են, որ նա ստացել է իր ծննդյան տարեկիցների առիթով:

Հատ են այս տան այցելուները: Ով գալիս է Հայաստան, իր սրբազան պարտքն է համարում


լինել Վարպետի տանը, լսել նրա ձայնը՝ իր ստեղծագործությունները կարդալիս, ունկնդրել բանաստեղծի տեքստերով գրված հրաշալի երգերը՝ «Սիրեցի, յարս տարան», «Դարգս լացեք», «Ան, մութ ամպեր», «Օտար ամայի ճամփեքի վրա», «Մաճկալ»... և վերջում տպավորություններ թողնել գրառումների մատյանում. «Մենք այս տունն էինք գալիս, երբ դեռ տուն-բանագարան չէր. այլ պարզապես տուն, — գրում են մի խումբ գրողներ Լեռնային Ղարաբաղից: — Բայց այստեղ մենք մտնում էինք սրտի սրբազան դողով, ինչպես մտնում են ամենասուրբ մի տաճար: Հիմա էլ մենք այստեղ տեսանք, պագեցինք, լսեցինք հավերժ անմահ մեր Վարպետին և այստեղից դուրս ենք գալիս նույն անպատմելի պգացումներով, որ ունեինք նրա կենդանության օրով:

Վարպետի սրբազան պատկերը միշտ մեք սրտում է և կլինի գալիք սերունդների սրտերում:

Խորին շնորհակալություն այս տուն-թանգարանն ստեղծողներին ու պահպանողներին, որոնք ամեն ինչ արել, անում են՝ մեծ Վարպետի կյանքը, գործը, հիշատակը ամբողջական ներկայացնելու համար»:

...Այսպես, անվերջ գալիս են ու գալիս. և նրանք, ում չի վիճակվել տեսնել մեծ բանաստեղծին, և՛ նրանք, ովքեր տեսել են, բայց ուզում են նորից տեսնել ու լսել անմոռանալի Վարպետին:

ԱՍՏԴԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ



ՆԿԱՐՈՒՄ. — Վարպետի աշխատասենյակը:

Լուսանկար՝ Չ. Բշտիկյանի

ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ՍՏՈՒԳՆԵՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Օրերս երևանում անցկացվեց անդր-կովկասյան երեք ռեսպուբլիկաների խորհրդակալ-դոկումենտալ, գիտամասսայական և հեռուստատեսային կինոնկարների ստուգատեսը:

Ստուգատեսին ներկայացվել էին Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի

տեսին ներկայացրած չորս ֆիլմերից և երկու ժուռնալներից առաջին կարգի դիպլոմ հանձնվեց ռեժիսոր Գ. Մելիք-Ավագյանին՝ «Բարև, Արսյո՛մ» կարճամետրաժ դոկումենտալ ֆիլմի համար, որը նվիրված է Հայրենական պատերազմի մասնակից Արսյոմ Պետրոսյանի հերո-

ՀՅՈՒՐԵՐԻ ԺԱՄԱՆՈՒՍԸ ԷԶՄԻԱՍԻՆ

Շալրագույն պատրիարք, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի գահակալության տասնամյակի հանդիսությունների կապակցությամբ էջմիածին են ժամանում արտասահմանյան հյուրեր: Արդեն Հայաստան են եկել Մերձավոր Արևելքի հայ ազնվաբանական եկեղեցիների միության նախագահ Հովհաննես Ահարոնյանը: